ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2026թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Թանգարանների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և հիմք ընդունելով մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 23 N 1 եզրակացությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուին պատկանող 13 թանգարանային առարկաները 2026 թվականի ապրիլի 15-ից մինչև 2029 թվականի մարտի 15-ը «Հայաստանի գինու պատմության թանգարան» հիմնադրամին ցուցադրության նպատակով ժամանակավոր պահպանության հանձնելուն՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի _____ _____ի
N _____Ա որոշման

	Անվանումը	**Ստեղծման ժամանակը**	**Նյութը Տեխնիկա**	**Չափը**	**Քանակ**	**Հաշվառման համարը**	**Նկար**
1	Սափոր	19-20-րդ դդ	Կավ ջնարակած	Բրձ. 34 սմ	1	ՄՄ 2487-5	
2	Սափոր	Կուրթան, 8-7-րդ դդ	կավ	Բրձ. 22 սմ	1	ՄՄ 12345	
3	Կարաս	Կարմիր բլուր,մ.թ.ա. 6-րդ դար	կավ	բրձ. 90 սմ	1	ՄՄ2344-2	
4	Կարաս	Կարմիր բլուր,մ.թ.ա. 6-րդ դար	կավ	բրձ. 90 սմ	1	ՄՄ2344-3	

5	կարաս	Կարմիր բլուր, մ.թ.ա. 7-րդ դար	կավ	բրձ.84 սմ	1	ՄՄ2344-1	
6	Սափոր	Կարմիր բլուր,մ.թ.ա. 7-րդ դար	կավ	Բրձ. 23 սմ	1	ՄՄ1213	
7	Ջրատար խողովակ	Երևան, 9-11-րդ դդ	քար,տուֆ	68x47 սմ	1	ՄՄ1896-1	
8	Ձրատար խողովակ	Երևան, 9-11-րդ դդ	քար, տուֆ	68x47 սմ	1	ՄՄ1896-4	
9	Կուռք կանացիակերպ	Կարմիր բերդ մ.թ.ա. 1-ին հազ. սկիզբ	Քար, տուֆ	Երկ. 76 սմ	1	ՄՄ16614	
10	Ֆալլոս	Երևան,մ.թ.ա. 2-րդ հազ.	քար	Բրձ. 66սմ	1	ՄՄ589	
11	Ֆալլոս	Երևան, մ.թ.ա. 2-րդ հազ. վերջ	քար	Բրձ. 132 սմ	1	ՄՄ11555-7	

12	Կարաս, շուրթի բեկոր	Կարմիր բլուր, մ.թ.ա. 7-րդ դար	կավ	25x60 սմ	1	ՄՄ1204	
13	Խոշոր անոթ	Կարմիր բլուր, մ.թ.ա. 7-րդ դար	կավ	39x59սմ	1	ՄՄ2344-9	

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միջթանգարանային համագործակցությունը Երևան քաղաքի պատմության թանգարանի ռազմավարական գործունեության, հավաքածուների հանրահռչկման և կրթական գործունեության կարևոր ուղղություններից է: Թանգարանը ունի մոտ 100 հազարի հասնող թանգարանային հավաքածու, որի միայն 1/10 մասն է ներկայացված մշտական ցուցադրության մեջ:

Երևան քաղաքի պատմության թանգարանի և Հայաստանի գինու պատմության թանգարանի համագործակցությունն արդեն տարիների պատմություն ունի, որի ընթացքում իրականացվել են համատեղ ծրագրեր և նախաձեռնություններ՝ ուղղված հայկական գինեգործական, հնագիտական ժառանգության հանրահռչակմանը: Դրանք տարածաշրջանում ձևավորված խաղողագործական և գինեգործական զարգացած ավանդույթների կարևոր վկայություններ են և էական նշանակություն ունեն Երևանի հնագույն պատմության ու մշակութային ժառանգության ներկայացման տեսանկյունից:

Նախագծով առաջարկվում է «Երևանի քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ին նոր պայմանագրի հիման վրա 2026 թվականի ապրիլի 15-ից մինչև 2029 թվականի մարտի 15-ը «Հայաստանի գինու պատմության թանգարան» հիմնադրամին ժամանակավոր պահպանության հանձնել «Երևանի քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուում ներառված 13 թանգարանային առարկա:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ